

•Բ. Ա. Ռ. Ե Ա. Կ Ն. Ե Ր

ԳՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՈԶ

իմ աչքերի լոյսը քիչ-քիչ պակասում է, ի՞նչ անեմ,
կեանքիդ պատրոյկն է կարձանում, Սեւան, քո լոյսն ի՞նչ անեմ,
ի՞նչպէս հալեմ աչքիս լոյսով սասցէ շղթան Մասիսի,
թղճի ժեռած մահիկն ի՞նչպէս արենի պէս ջինջ անեմ:

* * *

Յոյսըս մնաց սեւ ամպի տակ, ամպից հանող չմնաց,
վշտիս ամպը մեր սարերից հեռող վանող չմնաց,
Ո՞վ էր տեսել, որ ամպն այսքան երկար մնար Մասիսին՝
Սիրոս արտի պէս հերկեցին, բայց յոյս ցանող չմնաց:

* * *

Թէեւ մանուկ երգիս չուրթին ստինք ու կաթ եղաւ կեանքս,
Բայց միշտ ամպ ու կայծակի մէջ Մասով դաշտ եղաւ կեանքս,
Ես երկնքից ոչ թէ ինձոր՝ ասողեր պիտի վար թէրէի, —
Հաղիւ երեք ինձոր թողած՝ դառը հերկաթ եղաւ կեանքս:

* * *

Մէկ էլ տեսար՝ մէկի ողին ժամանակի ողին դառաւ,
Գաղափարը կաղապարուեց, մէկն հազարին բազին դառաւ,
Ամենազօր հանուրին անդամ՝ եսի ընդդէմ թուր է թղթէ,
Մէկ էլ... տեսանք՝ աստուածացուղ դարը մէկին մի կին դառաւ:

* * *

իմ յոյսի գուռ Հայաստանիկ, ամէն քարդ համբուրեմ,
Հայ ներգաղթի ճամբէն բացող ոսկէ դարդ համբուրեմ,
Որ աղային սուրբ հերոսիդ զուրս հանեցիր ասողի պէս,
Ե՛կ, Մասիսի մէծախորհուրդ ճանապարհոց համբուրեմ:

Ամէն գիշեր օրոցքն ըլից մի նարդիկ է դուրս զալիս,
Հայոց յոյսի անապատից ովասիս է դուրս զալիս,
Ինչ էլ ասեմ, ինչ էլ խօսեմ, յոյս, թէ անյոյս, կեանք թէ մահ՝
Որի դէմքն էլ թէ քանդակեմ՝ միշտ Մասիս է դուրս զալիս...

* * *

Հայաստանը՝ ծովի կարօտ՝ ծարաւէ է նմանում —
Խաւարումից նոր գուրս ենող արեւի է նմանում,
Նորալուսնի չափ ազատուել՝ թէիւ յոյսով կը չողայ,
Դեռ գերի է արեւ մասը ու սեւի է նմանում...

* * *

Ինձ Մասիսից զրկող ձևոր նեռ է, ուրիշ նեռ չկայ,
Մասիսն Հայոց մայրն է միակ, մօրից էլ սուրբ գեռ չկայ,
Ճերմակ ձիւնը ճերմակ կաթն է յաւերժ մանուկ հայ ողու,
Հայոց տոտեմն Արարատն է, ուրիշ տոտեմ լեռ չկայ...

* * *

Ո՞վ Արարատ, մի՞թէ իրաւ եւ գերի սար կը մնայ,
Եւ գերի սար, եւ սիրատենէ գերի քնար կը մնայ,
Մի՞թէ իրաւ են բարբառում, թէ քեզ երբեք չեմ հասնի
Քանի Աստծոյ մի աշխարհում երկու աշխարհ կը մնայ:

* * *

Փլուզում է ամէն վայրկեան, բայց աշխարհը կայ ու կայ,
Ամէն մի գար լոյս է ծնում, բայց խաւարը կայ ու կայ,
Խաւարն, աւա՛զ, լոյսի մայրն է, լոյսն էլ մայրն է խաւարի,
Փլուզում են ողջ գարերը, վշտի գարը կայ ու կայ:

* * *

Արքաներից մինչեւ ծառան՝ խոտերն են քար բնութեան,
Մարդիկ՝ թէ միշտ վերջն նայես՝ որդերն են մայր բնութեան,
Թեկուզ լուսնին ոտք էլ դնեն՝ տիեզերն է գեռ անտէր, —
Քանի կեանքերն ակնթարթ են՝ ճորտերն են չար բնութեան:

* * *

Արդարութիւն, աւա՛զ, թէ կաս՝ ո՞ւր են հովերն իմ Մասնայ,
Ինչո՞ւ մի բուռ վանդակում են անգում ծովերն իմ Վանայ,
Ո՞ւր է արծիւ Վասպուրականն, յոյսն ինչո՞ւ են վանդակեւ, —
Յաւերս ո՞վ է վանդակելու, ո՞ւր են հովերն իմ Մասնայ:

* * *

Մութ անտառ է՝ մտել՝ դուրս չեմ կարող գալ,
Վառւում եմ ես, բայց ինձ լոյս չեմ կարող տալ,
Այսքան մութ կայ՝ իմ աստղն ի՞նչպէս չենուէր՝
Դուրս էլ որ զամ, ո՞վ Տէր, կոյս չեմ կարող գալ:

Ո՞վ գարերի բանաստեղծներ, ինձ էլ հասաւ ցաւը ձեր,
Ա՛խ, իմ նաւուն էլ ժայռին բախուեց, ինչպէս բախուեց նաւուը ձեր —
Ես էլ Հայոց ափն եմ վիճառում օսար ծովում ալեկոծ, —
Ինձ էլ ծովը սուզել կ'ուզէ՝ դեռ չտեսած լաւը ձեր... .

* * *

Մինչեւ կաթիւը չանուշնայ՝ ծովերը չեն անուշնայ,
Մինչեւ ծովերն հովեր չտան՝ հասկերը չեն անուշնայ,
Աւա՞զ, գտան կաթիւները դառն ծովեր են ծնում,
Մինչեւ մարդը չքնքչանայ՝ աղդերը չեն քնքչանայ:

* * *

Յանկարծ թէ մի հրաշքի պէս մանկութիւնս ինձ ետ դար,
Մօրս գրկից նոր իջնէի՝ մեղմութիւնս ինձ ետ դար,
Ուրիշ ճամբով կը սկսէի մանկութիւնից կեանքս նոր՝
Ա՛խ, չէ, այս է՝ պարզն է լաւը, թող գալունս ինձ ետ դար:

* * *

Մինչ ահաշուք ճշում էին թէ՝ ձեռ քաշենք Մասիսից,
Մինչ կ'ուզէին ինձ էլ պոկել աստուածաշնք Մասիսից՝
Ես իմ որդոց անունները Սիս ու Մասիս կնքեցի,
Որ յաւիտեան ելնենք Մասիս՝ ձեռ չքաշենք Մասիսից:

* * *

Ա՛խ, գեռ Մասիս չտեսածին Մասիս սար է իմ երգը,
Պանդուխտ Հայոց վէրքու սրտին դեղ ու ճար է իմ երգը,
Նորարար է, հնարար է, հնարար է, նորարար, —
Հայոց յոյսի մութ մատուռին լուսարար է իմ երգը:

* * *

Աստուած մարդուց երես զարձուց, ես աստըծուց գարձրի,
Ա՛խ, մարդուց էլ իմ երեսը ես զեռ մանկուց գարձրի,
Քանզի մարդով չի յայտնում Աստուած դեռ հէտ Մասիսին,
Աստուած Հայից երես զարձուց, ես նեռ մարդուց գարձրի:

(Շարունակելի)